

ՄԱԿԱՐ ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆԻ ԱՐՑԱԽԱՊԱՏՈՒՄԸ

ԶԻՆԱԻԴԱ ԲԱԼԼԱՅԱՆ

Նվիրվում է մեծ հայագետ Մակար Բարխուդարյանի «Արցախ»-ի հրատարակման 120-ամյակին

XIX դարի հայ մտավոր-գրական կյանքի նշանավոր անուններից է Մակար Բարխուդարյանը, որի գրական վաստակը և մանավանդ «Արցախ» գիրքը երկրամասի պատմության արժեքավոր վավերագրերից է:

Մակար Բարխուդարյանը ստեղծել է պատմագիտական-հայագիտական, աղբյուրագիտական, պատմահանրագիտական, գրական, բանասիրական, քննադատական, կրոնական աշխատություններ:

Հիմնականում Անդրկովկասի մշակութային կենտրոն Շուշին է եղել բանահավաքի բնակության և գործունեության կենտրոնը: Մահկանացուն կնքել է էջմիածնում 1906 թվականին:

Բարխուդարյանի շրջագայությունների և ուսումնասիրությունների լանդշաֆտը եղել է Անդրկովկասը, առանձնապես Ելիզավետպոլի նահանգը, Երասխից մինչև Դերբենդ, ապա Հնարակերտից մինչև Մուխանք գավառը:

Մ. Բարխուդարյանին հաջողվել է մեծ դժվարությամբ հավաքել հարյուրավոր վիմական արձանագրություններ, արտագրել բազմաթիվ ձեռագիր հիշատակարաններ, Հայսմավուրք, հմտորեն նկարագրել բոլոր բերդ-ամրոցները, վանական համալիրները, լքված ու շեն, նաև ավերակ բնակատեղիները: Այդ ամենի արդյունքը եղել են նրա երկերը, հնագիտական մեկնությունները, որոնք իրենց տեսակի մեջ առաջինն էին:

Պատմամշակութային արժեքների, հուշարձանների նկատմամբ մարդկանց ցուցաբերած անտարբերությունն էր պատճառ հանդիսացել հնաբանի անհանգստության, որից միմիայն օտարներն են օգտվել. «Մեր անտարբերությունից օգուտ են քաղում օտարներն»¹, - հատկանշում է բանահավաքը «Արցախ» գրքի «Յառաջաբանություն»-ում: «Աղվանից երկիր և դրացիք» (Թիֆլիս, 1893) երկհատորյակն ամբողջացնում է Հայաստանի արևելյան գավառ-

¹ Բարխուդարյանց Մ., Արցախ, Երևան, «Ամարաս» տպ., 1996 (այսուհետև՝ Բարխուդարյանց Մ., Արցախ), էջ Ա:

ների (պատմական Ուտիք և Արցախ նահանգների) պատմությունը, ազգագրությունը, հոգևոր և նյութական արժեքների և մշակութային հուշարձանների պատմությունը:

Մակար վարդապետի երկրորդ և առավել արժեքավոր հրատարակումը «Արցախ»-ն է (1895), իր գիտական մակարդակով արդիական հնչողություն ունեցող մի ուսումնասիրություն, որը հանրագիտարանային բնույթ է կրում՝ որպես հայագիտական-արցախագիտական կոթող:

Աղբյուրագիտական այս հուշարձանը վերահրատարակվեց 1996թ.՝ նվիրված նրա առաջին հրատարակման 100-ամյակին: Այն նախաձեռնել է ԱրՊՀ նախկին ռեկտոր Պ. Գևորգյանը՝ պահպանելով առաջին հրատարակության գրաբարյան՝ դասական հայերենի ուղղագրությունն ու տիտղոսաթերթի նախկին հրաշալի պատկերազարդված ձևը:

Գրքի տիտղոսաթերթին գրված է՝ «Արցախ», Մակար եպիս. Բարխուտարեանց, Բագու, տպարան «Արօր», 1895: Հեղինակն ուղերձով դիմում է Հայոց Վեհափառին՝ Խրիմյան Հայրիկին, պարտավորված է զգում նրան վաշելույ ընծա նվիրել. «Բայց որովհետև սիրում է Ձերդ Վեհափառութիւն հայրենի հնութիւնները և աստուածակոխ Ս. երկիրը, ինչպէս ակներև է Ձերդ Հայրութեան սրտաշարժ և հոգեշունչ բանահիւսութիւնից- «Հրաիրակ երկրին Արարատայ» և «Հրավիրակ երկրին Աւետեաց», վասն որոյ բարուք համարեցի նուիրել Հոգեծին և Բազմերախտ Հօրդ իմոյ՝ «Արցախ»-ը, որ պատկերացնում է Մեծն Հայաստանի 15 նահանգներից մէկի հայկական աւերակների և հնութեանց փռշիները և Յիսուս Քրիստոսի ձեռագիր աւետարանների յիշատակարանների փշրանքները»:

«Արցախ»-ը ճանապարհորդական գրառումների մի հետաքրքիր հավաքածու է: Այն հեղինակը միահյուսել է Արցախում կատարած երկարատև շրջագայություններից-ճանապարհորդություններից հետո: Մանրամասնորեն տըրված են Արցախի գյուղերն ու քաղաքները, աշխարհիկ և հոգևոր շինությունները (հին ու նոր), չնաշխարհիկ բնությունը, ժողովրդի ստեղծած բերքն ու բարիքը, աշխարհագրական ու պատմական ճիշտ պատկերը:

Ս. Բարխուտարյանը ցավով է փաստում «յուրյանց» անհոգ ու անտարբեր վարքը Արցախի հնությունների հանդեպ, թե մեր նախնիներն ինչ են ավանդել սերունդներին, թե «չգիտենք թե պատմական փշրանաց ինչ յիշատակարաններ կան թաքնուած մեզ շրջապատող լեռների, ձորերի և դաշտերի մէջ. չգիտենք թե ազգային անցեալ պատմութեան մութ կէտերը լուսաբանող ինչ արձանագրութիւններ կան աւերակ վանքերի և անապատների, մատուռների և

եկեղեցիների, խաչարձանների և տապանաքարերի վերայ և մագաղաթեայ գրչագիրների յիշատակարաններում»² :

Արցախի պատմության հանդեպ այս շնորհակալ գործը XIX դարում առաջինը սկսել էր Մուրացանը:

Վերջինիս նշած ճանապարհով ընթացավ Րաֆֆին, որի շրջագայության արդյունքը եղան «Երկու ամիս Աղվանից շուրջը» ճանապարհորդական նոթերը: Այս ազգանվեր ծրագրի շարունակողն էր Մ. Բարխուդարյանը: Նա տեսավ, որ ժամանակի անողոք մագիլները եղծում են հայրենի Արցախի ամենապատվական հնությունները, տեսավ, որ ցեցերն են կրծում և ոչնչացնում թանկարժեք ձեռագրերում պահպանված պատմական մարգարտաշարը, տեսավ, որ մեծատուններն ու ընկերություններն անհոգի են այդ ամենի հանդեպ և չեն ձեռնարկում Արցախի հետազոտության գործը, ուստի սրբազան պարտք է համարում սիրով կրել ամեն-ամեն նեղություններ, միայն թե կարողանա «ազատել մնացեալ յիշատակարանները աւերիչ ձեռքերից, ցեցերից և խոնաութիւնից և ժամանակի ճիրաններից և գոնէ կազմել մի ուղեցոյց՝ ապագայ հմուտ մասնագետների համար»³:

Արցախագիտական այս կոթողն ունի «Յառաջաբանութիւն»՝ 7 ամփոփ էջի ծավալով: Գիրքը բաղկացած է 264 էջից ու ծանոթագրություններից, որտեղ ցույց է տրված 24 ավերակ՝ վաղեմի շնորհներից ընկած կամ մահմեդաբնակ դարձած քաղաքների, նույն վիճակով 13 գավառների ու դրանց ենթակա բնակավայրերի ցուցմամբ: Բովանդակությունն այբբենական ու թեմատիկ ձևով է ներկայացված: Արցախյան ավանդույթների, տիպական էթնիկ ձևույթների քննությամբ է տրված 19 տեղանքի նկարագիրը՝ համապատասխան առանձնահատկություններով, պահպանված ծիսակատարություններով, եկեղեցական արարողություններով:

Հեղինակը շարունակաբար ներկայացնում է պատմական, աշխարհագրական, ռելիեֆի, տնտեսական, երկրաբանական, հողերի վիճակի, գետերի, լեռների, ապարների, բրածո-հանածոների, օգտակար երևույթների, գործառույթների, կլիմայի, ժողովրդավարության, տնտեսավարության և այլևայլ համակարգերը: Ընդգծվում են վանական սրբատեղիներ, անապատներ, հոգևոր կենտրոններ, ապարանքների տեղադրություններ... Հայագետի յուրաքանչյուր տողից երևում են նրա սերն ու ականածանքը նախնի լուսավոր մարդկանց,

² Բարխուդարյանց Մ., Արցախ, էջ Ա:

³ Նույն տեղում:

նրանց վարքի ու առաքելական գործերի հանդեպ, ինչպիսիք են՝ Գր. Լուսավորիչը, Գրիգորիսը, Սուրբ Մեսրոպ Մաշտոցը և ուրիշներ: Մանրատառով հատկանշված են մասունքները:

Բարխուդարյանը ցավով է խոսում վանքերի, Աղվանից կաթողիկոսության վախճանի մասին. «Լուսահոգի Բաղդասար մետրապոլի կենդանության ժամանակ,-գրում է նա,- շէն և պայծառ տեսած եմ Եղիշ-առաքելը, Ինն մասը, Գանձասարը, Ս. Յակովբը, Պտկես-բերդը, Ամարասը, Գտիչը և Սպիտակ-Խաչը և Ղևոնդեանց անապատը վանահայրերով, միաբաններով և ուսումնարաններով»:

ԻԱ մասում ցույց է տալիս յուր կրած տառապանքները. «Շրջակայությանն ժամանակ կրեցի մեծ նեղութիւն. երեք անգամ ազատուեցայ արինարբու աազակաց ձեռքն ընկնելուց, երեք անգամ ձիու տակ մնացի վտանգաւոր տեղերում, այս է սահեցաւ ձիու ոտքերն. ընկաւ ուժգնակի գետնին և ես մնացի ձիու ներքև. երեք օր մնացի անսուաղ (քաղցից դալկացած- Զ.Ա.-Բ.) Ծար գաւառում հաց չգտնելու պատճառաւ»⁴:

Ու այսպես, գծվում է նրա ճանապարհորդության շղթան՝ Հարթավայրային և Լեռնային Արցախ ամուր աշխարհի (Բուզանդ) տարածքով՝ անանցանելի, անդնդախոր կիրճերով, թավանիստ լեռներով, Մայր Տրտուի (Թարթառի) վտանգավոր փեշերով, Կուրակի, Կաշկառի, Բանանց, Շամքորի և այլ գետերի, ջրերի հոսանքներն ի՛ վար, ի՛ վեր...

Անշուշտ, նման հսկայական աշխատանքը հնարավոր չէ՝ անսխալական լինի՝ կապված տարաբնույթ հարցադրումների՝ լեզվական, շարահյուսական, բառաբարդման, ածանցման, հնչյունափոխված և այլ ձևայինների շեղումների հետ: Հեղինակը հաճախ է փորձում օտար տեղանունների անճանաչելիության աստիճան հնչյունափոխված անունների հայերեն բառակապակցությունները գտնել, մեկնաբանել, ստուգաբանել, հատուկ անունների բառակազմությանը տալ իր նախկին փայլը՝ վերականգնելով երևույթի իսկական հնչեղությունը, արտասանությունը, օրինակ՝ Դամիրչիլար՝ Դարբնոց, Ալաիվերտի՝ Աստվածատրի գյուղ, Հարճիլար-Հարճլանք, Քիլիսաքեանդ՝ Եկեղեցաձոր, Ղարաբաղ՝ Սև այգի, Ղարաբուլախ՝ Սև աղբյուր, Ղ/Կարաբաղ- Սև այգի և այլն...

Իսկ ահա երկու հազարից ավելի տարիների կյանք ունեցող Վարանդա գավառի Սխտորաշենին մոտիկ գտնվող տնջրու մասին Բարխուդարյանը

⁴ Նույն տեղում, էջ Է:

այսպես է արտահայտվում. «Շինիս այգիների աղբիւրի մօտ կայ մի թեղի բազմադարեան ծառ, որի հաստութիւնն է 22 մետր, 75 սանթիմ»⁵ :

«Արցախ»-ի մեջ Բարխուդարյանը գետեղել է երկրամասի նախկին և փոփոխված շատ սահմանագլուխները՝ ներառյալ լեռներ-լեռնակներ, դաշտեր-դաշտակներ, գետեր-գետակներ, մեծ աղբյուրներ, նավթահանքեր, հանքային ջրեր, այլևայլ շինության քարերի հանքեր, անտառը յուր ունեցած շոայլանքներով: Գրքում միաժամանակ հեղինակը գետեղել է տեղեկություններ շինականների հագուստների, բանջարեղենի, մրգերի, ընտանի և վայրի բույսերի, թռչունների, գործածվող աշխատանքային գործիքների, զենքերի մասին մի ամբողջ հանրագիտարան. մի խոսքով՝ բնության, մարդկային հասարակության, մարդու ստեղծած մշակութային արժեքները ներկայացնող ընտրված դաշտ՝ պատմական, աշխարհագրական, կրթական կյանքի ամբողջական հիմքը:

Հեղինակը գծագրում է Ուտիքի և Արցախի բոլոր գավառների սահմանները՝ նշելով. «Մեծ-Հայոց 15 նահանգներից մինն է Արցախն, որի սահմաններն էին Հայոց Վաղարշակ թագաւորի ժամանակ (Երասխ գետն, Արցախական ամենաբարձր սարերի գագաթնագիծն և Հնարակերտ ամրոցն: Այս սահմանների և Կուր գետի և Կովկաս մեծ սարի մէջ ընկած տարածութեան վերայ Կուսակալ կարգուած էր Սիսական Առանն նոյն Վաղարշակ թագաւորից»⁶:

Քննելով Արցախական աշխարհի աշխարհագրական և պատմական տեղանվան հարցը՝ Բարխուդարյանը, աղբյուր ունենալով Խորենացու պատմությունը, նշում է. «Այս նահանգն զանազան դարերում փոփոխություններ կրելով Հայերից կոչուած է Գ ա ռ գ ա ռ, Արցախ, Փոքր Սինիք, Խաչենք, Սեաւ Այգի, Իսկ Պարսիկներից և Տաճիկներից՝ Ղարաբաղ»⁷ :

Ներկայացնելով Արցախի գավառների բնաշխարհը՝ Բարխուդարյանը ցույց է տալիս, թե յուրաքանչյուր գավառ քանի գյուղ, քանի ծովա, արական, իգական սեռի ներկայացուցիչներ, պսակ, ննջեցյալներ (արական, իգական), եկեղեցի ու քահանա է ունեցել:

Դրանց շարքում գերակշռող է եղել Վարանդա գավառը՝ իր 61 գյուղով, 7003 ծխով, 24,193 արական, 19,774 իգական բնակիչներով, իրարից տարբեր-

⁵ Նույն տեղում , էջ 68:

⁶ Նույն տեղում, էջ 1:

⁷ Նույն տեղում, էջ 2:

վող ծնունդներով (արական՝ 700, իգական՝ 500), պսակը՝ 312, արական ննջեցյալ՝ 201, իգական՝ 181, գավառն ունեցել է 58 եկեղեցի իր 66 քահանաներով⁸:

Մանրախոյզ-քննախոյզ է Բարխուդարյանն իր կառուցվելիք աշխատանքում, իր գործի ասպարեզում պարզապես բանիբուն հետազոտող, նվիրյալ:

Յուրաքանչյուր գավառի ուսումնասիրություն ամփոփում է նրան վերաբերող բոլոր փաստերը՝ վիճակագրական, բնական, հոգևոր, իրավական, հողային՝ արքունական, վանքային, բեկական, կենդանական, բուսական աշխարհները, հնությունները, վիմեղեն և գրագիր արձանագրությունները, կրոնական, աշխարհիկ մատյանները, ավանդույթները, վանական, աշխարհիկ համալիրները՝ իրենց բոլոր պարագաներով:

Արտաքինից Մ. Բարխուդարյանի գրքի շարադրանքում մի քիչ չորություն է զգացվում, բայց դա առաջին հայացքից, ուշադիր ընթերցման, մտորման, քննման, հայեցման դեպքում մեր առջև բացվում է մի անկրկնելի, հրաշագեղ, հարուստ պատմությամբ, բարքերով, հոգևոր և աշխարհիկ առաքինություններով պսակված բիբլիական աշխարհ, որի անունն Արցախական երկիր է, մարդկային բնութենական բոլոր հրաշքների թագ ու պսակ հանդիսացող խորհրդով, ազատության և քաջագործությունների մղվող արցախահայության անգերազանցելի հատկություններով:

Դիտենք, որ Վարանդական աշխարհին վերաբերող նկարագրությունները, բազմաբնույթ փաստերն ավելի գերակշռող են մնացած գավառներից.

«Ամարաս Վանք (15).

Հիմնուած է այն երկրաւելգուի վերայ, որ Մուղան դաշտից կամ գաւառից մտած է Խազազի և Լուսաւորչի սարերի մէջ և կազմած դուրալի հովիտ, որի միջից հոսում է Ամարաս վտակն....

Հիւսիսային դասում առաջին լուսամտին պատկից շինուած է մի գեղեցիկ տապանաքար, որի տակ է ամփոփուած Սուրբ Լուսաւորչի Թոռին- Աղուանից Ա. կաթողիկոս Գրիգորիսի մարմինն: Ահա այս է գլխաւոր ուխտատեղին: Վանքիս երկարութիւնն է 23 մետր, լայնութիւնն՝ 13 մետր 33 սանթիմ:

Տաճարումս է մասն սրբոյն Գրիգորիսի զետեղուած մի արծաթեայ, ոսկեզօծ, ականակուտ և մարգարիտներով զարդարուած աջի մէջ, որ կրում է. «Աջ սրբոյն Գրիգորիսի Աղուանից հայրապետին շինեցաւ յամին 1870 ի Շուշի

⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 300:

քաղաքի անվարձ աշխատութեամբ Շուշեցի ոսկերիչ Միրզաջանայ Խոջաբաղ-րեանց, Գրիգորի Բատամեանց և Առաքելի Յարութինեանց»⁹:

Վարանդական աշխարհի մելիքանիստ Ավետարանոցի եկեղեցում պահված գրչագրերի և մատուցների մասին, որտեղ երևում են նաև հայ կնոջ շնորհալի տաղանդի հետքերը, քննաբանն ասում է. «Սուրբ աւետարան սրբագիր և ոսկեզօծ վախմ և յիշատակ է Աբրահամ պարոն- Տէրին, որ տվան Մէլիք Պաղուն կուսակօսն դստերացն Հռութսմին և Դաւլաթին և Շահան-դուխտին ձեռքն ի վայելումն.... գրեցաւ մատամբ տէր Էղիազարին մայիսի Իեօրն թվ ՌՃՁԶ էր.... » (քերված է գրչագրից)¹⁰ :

Ավետարանոցում մելիքական ապարանքների հետքեր կան, ինչպիսիք են՝ Մելիք Հուսեինի, Մելիք Շահնազար Բ-ի, Մելիք Բաղու ապարանքները: Վերջինիս մոտ է Կուսանաց անապատը, որտեղ թաղված է ամբողջ Հայոց, Արցախ աշխարհին հայտնի հերոսական Գայանեի՝ Մելիք Հուսեինի դստեր, Մելիք Շահնազար 2-րդի քրոջ գերեզմանը: Մելիք Բաղու ապարանքի վերնա-հարկը «ռազմագետ գեներալ Առուստամ /Գիւգիեան» Մադաթովի հրամանով քանդել են ու նրա համար բնակարան շինել, որը 1826թ. Արցախում հայտնված պարսից շահ Աբաս Միրզայի հրամանով քանդել են, քանզի վերջինս հայ զորավարական հանճար գեներալ Մադաթովից շատ անգամ է պատուհասվել, ոմբակոծվել, փախուստի մատնվել, վերջնականորեն դուրս շարտվել Արցախից նրա հրամանատարությամբ գործող ռազմական բանակի կողմից 1826-28թթ. ռուս-պարսկական պատերազմի ընթացքում:

Ավետարանոցում է իր իմաստասիրական և այլ բնույթի երկերը գրել Վաչե թագավորը, որը թաղված է գյուղի իշխանական գերեզմանոցում: «Աւե-տարանոցս իբրև մէլիքանիստ աւան և գաւառագլուխ, ունեցած է ամուր պարիսպ, որով շրջապատուած է եղել ամբողջ աւանս (Շուշիի պարիսպների շինարարությունն ընդօրինակած է Ավետարանոցի պարսպաշարի կառուցո-ղական ձևույթը- Ձ. Ա.-Բ.)....Պարիսպս շինող որմահիւս վարպետի գերեզ-մանն,- գրում է Բարխուդարյանը,- գտնուում է աւանիս միջում պարոն Առստա-մի (մականուանեալ Ումախան) պարտիզումն: Տապանաքարի հարաւային երեսին. «Անուան Մէլիք Շահնազարին (Գ-ին) որդի Մէլիք Սէյինի. այն ժա-մանակն որ Կուրջին եկաւ (Վրացի զօրք) թուին ՌՃՂԹ. էր, որ դաւաս (Ավե-

⁹ Նույն տեղում, էջ 74:

¹⁰ Նույն տեղում, էջ 62:

տարանոցի բերդը) շինեցի, ով որ կարդա, մէկ բերան Աստուած ողորմի ասի. ամէն»: Մյուս երեսին. «Այս է տապան Գաբրիէլի որդի Դաւթին թ. ՌՄԽԸ»¹¹:

Ապա նաև նույն տեղանքից մի փոքր վերև հետևյալ կարևոր տապանագիրը կա. «Ի ՈՂ ննճեց Հա.....թգաորի Աղվց.....ես տէր Մասուն գրեցինք. այս ով որ կարդէ. Աստուած ողորմի ասէ: Այս է հանգիստ Մուրադի Դաթիոնա գաջի(քաջի) Էարանդայ գավառ հմուտոյն ասպարաբետի (սպարապետի):- Բարխուդարյանը շարունակում է պատմականություն ունեցող վիճագրի շարքը՝ նշելով,- Տապանագրիս մօտ. կայ նաև մի այլ ձիու վերայ մի թագուհու պատկեր, բայց տապանաքարիս վրայ չկայ արձանագրութիւն»¹² :

Անդրկովկասի լուսավորական, մշակութային, կրթական, տպագրական, թատրոնի, հրատարակչական գործի, կրթության, արվեստների կենտրոն մայրաքաղաք Շուշիի աշխարհագրական և ծննդաբանական նկարագրի մասին Բարխուդարյանը նշում է. «Շուշի քաղաք (500 ոտք). Հիմնուած մի բարձրագոյն սարահարթի վերայ, որ գրեթէ առանձնացած է իւր չորս կողմերից: Լայն հորիզօն և անդնդախոր ձոր է հիւսիսային և արևմտեան կողմերն. որից հոսում է բուն Գարգար գետակս. հորիզօնն նեղ, վիմահերձ սարսափելի խոր ձոր է քաղաքիս արևելեան և հարաւային կողմն, որից հոսում է Գարգար գետակի օժանդակն, լայնատարած վիմահերձ և խոր երևոյթ ունի արևմտեան հարաւային կողմերի միջավայրն-քաղաքի արտաքին կողմն. իսկ սաստիկ զառիվայր է արևելեան և հիւսիսային կողմերի միջավայրի տարածութիւնն՝ պարսպից դուրս: Այլապես գրելով երեք կողմերն բարձր քերծեր են, իսկ չորրորդ կողմն պարսպուած զառիվայրի բերանով: Աւելորդ է գրել թէ քաղաքս կոչուած է և բերդ, բերդաքաղաք և ամրոց, որի մակերևոյթն զգալի կերպով թեքուած է հարաւային արևմուտքից դէպի հիւսիսային արևելք և որի տարածութիւնն պակաս է քառորդ քառակուսի մղոնից: Համարուած է այս գաւառագլուխ քաղաք, որի մէջ նստած է գաւառապետ, հաշտարար դատաւոր իրեանց պարագաներով հանդերձ»¹³:

Խոսելով բնակիչներից՝ Բարխուդարյանը տալիս է նրանց հիմնական տարրի (հայեր, շիա-մահմեդականներ) մասին, ցույց տալիս եկվոր հայերի կողմից նրանց երկրամասերի, բնակավայրերի անուններից կազմված քաղաքի թե՛ օձման, թե՛ երկրորդական թաղամասերի անունները, ինչպիսիք են՝

¹¹ Նույն տեղում, էջ 63:

¹² Նույն տեղում, էջ 64, 65:

¹³ Նույն տեղում, էջ 88, 89:

Ղազանչեցոց Ամենափրկիչ մայր եկեղեցին, Ագուլեցվոց եկեղեցին, Մեղրեցվոց եկեղեցին և այլն:

Բարխուդարյանը, իր ծննդավայրի մասին գրելով, նշում է նրա բնակիչների եկվոր լինելու հանգամանքը, որ Խնածափի բնակիչները սկզբից Մեծ Սյունյաց Խնածափ գյուղից 1686 թ. տեղափոխվել են Զրաբերդ, հետո բնակություն հաստատել իրենց անապական օդ, անմահական ջուր, բարեխառն կլիմա ունեցող գյուղում, որի բնակիչներից երկարակյացներն ապրում են մինչև 100 տարի. «Եկեղեցին,- նշում է Բարխուդարյանը,- Սուրբ Աստուածածին(ը), հոյակապ(է), կառուցեալ չորս սիւների վերայ, երկարութիւն 18 մետր, 82 սանթիմ, լայնութիւն 10 մետր, 60 սանթիմ, քահանայ մի: Ծուխ 85, ար. 289, իգ. 274»¹⁴: Թվարկում է եկեղեցում գտնվող գրչագրերը:

«Արցախ» մեծարժեք գրքից իմանում ենք հեղինակի կենսագրության մի աննշանի մասին միայն. «Գիւղումս ծնուած է և գրքիս հեղինակն. գիւղիս հանգստարանում հանգչում են իմ պապ Քէանդիսուտա-Խաչատուր Բարխուտարեանցն իւր շատ քաջերով, իմ հայր Գրիգոր, իմ մայր Եղիզաբէթ, իմ տատ Մարիամ, իմ հօրեղբայրք Մկրտիչ, Սարգիս, Թէոս, իմ վաղաթառամ եղբայր Ստեփան, բայց կենդանի են Աստուծոյ ամենակարող զօրութեամբ իմ մեծ եղբայր Կարապետն, փոքր եղբայր Յակովբն և իմ մեծ քոյրերս Անթառամն, Շահգատն և Հերիքնազն (վաղաթառամ վախճանուած է Պալլուճայում իմ միջակ քոյր Վառվառիան: Հանգիստ ոսկերաց Քերոց սիրելիք իմ»¹⁵:

Ըստ կարգի, ըստ ճաշակի, ըստ մեծից փոքրի՝ տրված են վանքերը, բերդերն ըստ գավառների, քաղաքները՝ կանգուն, կիսավեր և ավերակ, բուսական և կենդանական աշխարհները (ընտանի և վայրի), սրբավայրերը, նրանցում գտնվող հոգևոր պիտույքները, մատյանները, գրչագրերը, պատկերազարդված Հայսմավուրքը (բացառիկ 1 օրինակ): Բարխուդարյանը ձեռագիր մատյանների մասին, որոնց հանդիպել է իր շրջագայության ժամանակ, նշում է. «ՁԵՌԱԳԻՐ անետարան 100 հատ, աստուածաշունչ 2 հատ, ճաշոց 1 հատ, յասմաւոր 1 հատ, մաշտոց 3 հատ, Սարգիս-շնորհալի 1 հատ, մեկնութիւն նարեկի 1 հատ, բացադրութիւն Հայոց ամիսների 1 հատ, ընդհանրական Ներ. Շնորհալու 1 հատ, մարմնամարզութիւն և երեզահան 1 հատ, բացադրութիւն յատուկ և հասարակ անուանց 1 հատ, թարգմանութիւն ի պարսիկ

¹⁴ Նույն տեղում, էջ 99:

¹⁵ Նույն տեղում:

բառից 1 հատ, խրատ Պլուտարքոսի 1 հատ, Քարոզ գիրք 1 հատ, շարական 1 հատ»¹⁶:

Միանգամայն ուսանելի են Արցախի տնտեսական կյանքի և արտադրական կուլտուրայի վերաբերյալ տվյալները. «Նահանգս արտահանում է ցորեն, գարի, բոժոժ, բամբակ, բուրդ, բրինձ, լուբիայ, բակլայ, սոխ, սխտոր, գետնախնձոր, ստեպլին, ճակնդեղ, ձմերուկ, սեխ, վարունկ, խաղող, գինի, օղի, ընկույզ, իւղ, պանիր, մեղր, կով, եզն, գոմեշ, ոչխար, այծ, խոզ, ձի, ջորի, ուղտ, արջենի, աղուխենի, ընձենի, գայլենի, սամուր(դէլէ), գոմեշենի, տաւարի, ոչխարի, ձիու, ջորու, խոզի կաշիներ և մորթիներ, պատուական գորգ, կարպետ, մափռաշ, խուրջին, ջրաղացաքար, տապանաքար, ծուկն, ձկնհաւկիթ և ձկնապուխտ»¹⁷:

Այսպիսով, Մ. Բարխուդարյանի «Արցախ» բնախոսությունը XIX դարի Արցախի պատմության, մշակույթի, հոգևոր արարումների վերաբերյալ անփոխարինելի վավերագիր է և ունի աղբյուրագիտական բացառիկ արժեք:

ԱՄՓՈՓՈՒՄ

«Արցախ»-ը ճանապարհորդական գրառումների մի հետաքրքիր հավաքածու է: Այն հեղինակը միախլուսել է Արցախում կատարած երկարատև շրջագայություններից- ճանապարհորդություններից հետո: Մանրամասնորեն տրված են Արցախի գյուղերն ու քաղաքները, աշխարհիկ և հոգևոր շինությունները (հին ու նոր), չնաշխարհիկ բնությունը, ժողովրդի ստեղծած բերքն ու բարիքը, աշխարհագրական ու պատմական լանդշաֆտի ճիշտ պատկերը:

Քանալի բառեր – Արցախ, խրատ Պլուտարքոսի, XIX դար, Մեծ Սյունյաց Խնածախ, Ամարաս վանք, Շուշի քաղաք, Ղազանչեցոց Ամենափրկիչ մայր եկեղեցի, Ագուլեցվոց եկեղեցի, Մեղրեցվոց եկեղեցի, Ավետարանոց, Խրիմյան Հայրիկ, Գանձասար, Գր. Լուսավորիչ, վավերագիր:

¹⁶ Նույն տեղում, էջ 299:

¹⁷ Նույն տեղում, էջ է:

“АРЦАХ” МАКАРА БАРХУДАРЯНА

ЗИНАИДА БАЛАЯН

"Арцах" – это интересный сборник путевых заметок. Автор написал его после долгих путешествий по Арцаху. Подробно описаны села и города Арцаха, светские и церковные строения (старые и новые), природа, созданные народом блага, точный портрет географического и исторического ландшафта.

Ключевые слова – Арцах, навет Плутарха, 19-ый век, Большой Сюнанц, Хнацах, монастырь, город Шуша, Собор Всеспасителя, церковь Казанчецоц, церковь Агулецвоц, церковь Мегрецвоц, Аветараноц, отец Хримян, Гандзасар, Григорий Просветитель, документ.

MAKAR BARKHUDARYAN'S TRAVEL BOOK “ARTSAKH”

ZINAIDA BALAYAN

The book "Artsakh" is an interesting collection of travel accounts. Makar Barkhudaryan has written it after touring and travelling the length and breadth of Artsakh. Barkhudaryan has described in great detail the cities and villages of Artsakh, its secular and spiritual edifices (old and new), the spectacular, breathtaking beauty of its nature, the commodities, basic resources and agricultural products of the natives as well as the geographical and historical landscape.

Key words – Artsakh, Plutarch, 19th century, Great Syunyats, Hnatsakh, monastery of Amaras, town of Shusha, the Cathedral Church of the Saviour Ghazanchetsots, church of Aguletsvots, church of Megretsvots, Avetaranots, Father Khrimyan, Gandzasar, Grigor Lusavorich, the document.